Կարգապահական գործ թիվ ԿԳ-15098

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի ապրիլի 5-ի թիվ 87-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/67-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ՝ նաև Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Լուսինե Սահակյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Լիպարիտ Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ դիմող Մելիդա Գրիգորյանի և փաստաբան Էդուարդ Սալանյանի (արտոնագիր թիվ 499)

քննության առնելով փաստաբան Էդուարդ Ասլանյանին (արտոնագիր թիվ 499, **այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

<u>1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.</u>

Գյումրի քաղաքի բնակիչներ Մելիդա Գրիգորյանն ու Մարիամ Գրիգորյանը 20.08.2015թ. դիմումներ են ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատ առ այն, որ՝

ա) ըստ՝ Մարիամ Գրիգորյանի դիմումի 13.09.2014թ. փաստաբանի կարիք ունենալու պատճառով պայմանագիր է կնքել Փաստաբան Էդուարդ Ասլանյանի հետ: Հայտնել է, որ չնայած փաստաբանին վճարել է պայմանավորված գումարները 20.000 ՌԴ ռուբլի և 780 ԱՄՆ դոլար, սակայն անցել է մեկ տարի փաստաբանի արած գործի արդյունքը չի երևում, բոլորի հետ կռվում է, վիրավորում, բոլոր լենինականցիներին հիմար է անվանում: Իր գործողությունները չի պլանավորում, ժամկետները ձգձգում է ու աշխատանքներ չի կատարում, իր գործը փաստաբանի համար հետաքրքիր չէ ու ինքը չգիտի թե փաստաբանը ում գործով է զբաղված: Խնդրել է ձեռք առնել համապատասխան միջոցներ ուրիշ փաստաբան նշանակել նրա փողհարեն:

բ) ըստ Մելաիդա Գրիգորյանի դիմումի փաստաբան Էդ.Ասլանյանի հետ աղջիկը՝ Մարիամը 13.09.2014թ. պայմանագիր է կնքել իրենց տնակի ժամանակավոր վարձակալ Արտյոմ Տոնոյանին և նրա ընտանիքին վտարելու, դստերը Մարիամին գրանցելու և անձնագիր ստանալու, ինչպես նաև Մարիամին որպես երկրաշարժից տուժածի հերթագրել բնակարան ստանալու մասին: Հայտնել է, որ իրենց տնակներից Արտյոմ Տոնոյանին վտարելու հարցը լուծվել էր դեռ 1990թ. դատարանի թիվ 2-489-90 քաղաքացիական գործով, վճիռը օրինական ուժ էր ստացել, սակայն վտարումը կատարված չի եղել:

Բացի դստեր գործերից, ինքը փաստաբան Է.Ասլանյանին հանձնարարել է ևս 2 առանձին գործեռ, որոնք վերաբերվել են իրեն, այն է՝ իր խորհրդային շրջանի փողերը բանկից ստանալու և 140.000 դրամի պահանջի մասին: Փոխադարձ համաձայնությամբ որոշել են վերջին գործի համար փաստաբանի ծառայության մատուցման համար հոնորարի չափը 1000 ԱՄՆ դոլար: նշել է, որ փաստաբանին առանց պայմանագիր կնքելու գումարներ է տվել, պահանջել է պայմանագիր կնքել, սակայն փաստաբանը տարբեր անհիմն պատճառաբանություններով քաշքշուկներ է ստեղծել ու պայմանագիր չի կնքել, իսկ փողերն էլ չի վերադարձրել: Նշել է, որ մշտապես փորձում է փաստաբանի հետ կապ հաստատել, սակայն ապարդյուՎ, փաստաբանը իր հեռախոսազանգերին չի պատասխանում, հեռախոսանամակներ է ուղարկել, որոնք ևս մնացել են անպատասխան: Իր հետ խոսելիս իրեն վիրավորել է, լկտի, բանսարկու է անվանել: Հայտնել է, որ դուստրը արդեն շուրջ 1 տարի է սպասում իր գործերի ավարտին, իսկ ինքը դեռ չգիտի թե իր գործերը փաստաբանը երբ է սկսելու երբ պայմանագիր էլ չի ցանկանում կնքել իր հետ: Այդ ամենով հանդերձ պահանջել է փաստաբանից ետ վերադարձնել իր փողերը, իր կողմից նրան տրված փաստաթղթերի բնօրինակները, սակայն Էդ.Ասլանյանը հրաժարվել է կատարել իր պահանջները: Խնդրել է փաստաբան Էդ.Ասլանյանից հետ վերցնել իր փաստաթղթերը և խիստ պատժել փաստաբանի բարի անունը աղավաղելու համար:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումը

2015 թվականի սեպտեմբերի 19-ին Պալատի նախագահի կողմից կայացվել է «Փաստաբան Էդուարդ Ասլանյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» 312-Ա/ԿԳ-15098 որոշումը, համաձայն որի որոշվել է փաստաբան Էդուարդ Ասլանյանի /արտոնագիր թիվ 499/ նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2, 2.2.3, 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.5.5, 3.6.1 և 3.8.5 կետերի պահանջների խախտման հատկանիշներով:

3. Դիմողի և Պատասխանողի բացատրությունները

Դիմող Մարիամ Գրիգորյանը գրավոր բացատրություն է ներկայացրել խորհրդին այն մասին, որ կրկին պնդում է ներկայացված դիմումում ներկայացված փաստերը: Նշել է, որ ինքը Է.Ասլանյանի հետ որևէ պայմանագիր չի կնքել, այլ իր խնդրանքով

պայմանագիրը կնքել ու փաստաբանին հանձնարարություն է տվել իր մայրը՝ Մելիդա Գրիգորյանը: Նշել է նաև, որ փաստաբան Է.Ասլանյանն անպատվում է իր մորը, սպառնում նրան գողական շրջապատով: Բացատրությամբ Մարիամ Գրիգորյանը խնդրել է ապահովել իրենց գումարների ու փաստաթղթերի վերադարձը և խիստ գնահատել միջադեպը:

Դիմող Մելիդա Գրիգորյանը ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին տվել է բացատրություն այն մասին, որ 14.09.2014թ. կնքել է պայմանագիր Էդուարդ Ասլանյանի հետ, որպեսզի վերջինս ներկայացնի իր և դստեր շահերը: Դուստրը պայմանագիր չի կնքել, քանի որ անձնագրում գրանցում չկար: Դստեր գործերը եղել են հետևյալները.

1. նա ուշացրել էր իր փլված բնակարանի համար հերթագրումը, հերթը պետք է վերականգնվեր,
2. նա վարձով էր տվել իր տնակը և վարձակալներին պետք էր վտարել,
3. պետք է լուծվեր դստեր հաշվառման հարցը և վերջիս պետք է գրանցվեր այդ տնակի վրա:

Փաստաբանը պետք է մեկ ամիս հետո սկսեր գործը: Այս գործերի համար իրենք վճարել են 159000 դրամ: Բացի այդ գործը ավարտելուց հետո իրենք փաստաբանին պետք է վճարեին նաև 10%: Մինչ օրս փաստաբանը դստեր որևէ գործով չի զբաղվել: Միայն դիմել է ոստիկանություն, քանի որ այդ տնակից գողություն էր կատարվել: 19.01.15թ. դիմել է դատարան, սակայն դատարանը մերժել է, քանի որ լիազորագիր չի ներկայացվել: Ներկայացրել է նաև այլ հայցեր, սակայն բոլորը սխալ: Առկա է 3 դատական ակտ:

Հետագայում մարտ ամսին ինքը հանձնարարել է Է.Ասլանյանին նաև երկու այլ գործեր՝ դեռևս խորհրդային տարիներից իր անվամբ բանկում ներդրված 9500 ռուբլու վերադարձի և հարևանից դատարանի վճռով իր օգտին կայացված 140000 դրամի բռնագանձման վերաբերյալ: Նշված երկու գործերի համար պատասխանողը պահանջել է 1000 ԱՄՆ դոլար, իրենք չեն առարկել և մայիսի վերջին վճարել են, քանի որ փաստաբանը խոստացել է 9500 ռուբլու դիմաց ստանալ 165000 ԱՄՆ դոլար: 1000 ԱՄՆ դոլարը վճարվել է հետևյալ չափաբաժիններով 30000 ՌԴ ռուբլի և 780 ԱՄՆ դոլար: Սկսած հունիս ամսի վերջից չի կարողացել կապնվել պատասխանողի հետ, գրել է բազմաթիվ հաղորդագրություններ, գնացել են իր բնակարան չեն կարողացել գտնել: Հետո նրան տեսել են դատարանում, բայց չեն մոտեցել: Քանի որ պատասխանողը չի զբաղվել իրենց գործերով, ինքը պահանջել է հետ վերադարձնել իրենց վճարած գումարները և փաստաթղթերը: Օգոստոս ամսին զանգահարել է աղջկան և իրեն անպատվել է ասելով. «տգետ ես դու, հիմար, ինչ ուզում ես գլխիցդ դուրս տուր»: Այդ խոսակցությունը իրենք ձայնագրել են և ներկայացրել խորհրդին: Բացի դա պատասխանողը իրեն տգետ է անվանել նաև հեռախոսով կարճ հաղորդագրություն ուղարկելով: Այդ հաղորդագրությունը ինքը ևս ուղարկել է փաստաբանների պալատ: Բացի այդ ինքը վիրավորվել է, քանի որ փաստաբանը հաղորդագրություն է ուղարկել ասելով. «չափդ ճանաչի տիկին»: Փաստաբանն ասել է, որ մինչև պայմանագիր չկնքի իր հետ, նա ոչ մի գործ չի շարունակի: Ինքը հայտարարություն է տվել Ասպարեզ թերթում, որ ովքեր տուժել են Ասլանյանի գործողություններից կարող են միանալ իրեն:

Պատասխանողը ՀՀ Փաստաբանների պալատի խորհրդին բացատրություն է տվել այն մասին, որ 13.09.14թ. պայմանագիր է կնքել Մարիամ Գրիգորյանի գործով զբաղվելու համար, մասնավորապես վերջինիս փլված բնակարանի համար հերթագրումը վերականգնելու, նրա կողմից վարձով տված տնակից վարձակալներին վտարելու, նրա հաշվառման հարցը լուծելու:

2015թ. սկզբերին ստացել է հանձնարարություն զբաղվելու նաև Մելիհդա Գրիգորյանի գործերով, մասնավորապես՝ դեռևս խորհրդային տարիներից բանկում ներդրված 9500 ռուբլու վերադարձի, հարևանից դատարանի վճռով 140000 դրամի բռնագանձման և վերջինիս հաշվառման վերաբերյալ: Նշված գործերի համար ծառայության արժեքը կազմել է 1000 ԱՄՆ դոլար, սակայն իրեն 2015թ. մայիսի 26 կամ 28-ին վճարվել է 780 ԱՄՆ դոլար, մնացած գումարը չի վճարվել: Մելիհդա Գրիգորյանի գործով զբաղվելու համար ցանկացել է կնքել պայմանագիր, սակայն, քանի որ վերջինս չի ունեցել անձնագիր, չի կարողացել կնքել: Հետագայում, երբ արդեն ստացել է անձնագիր բազմիցս հորդորել է կնքել պայմանագիր, սակայն Մելիհդա Գրիգորյանը հրաժարվել է կնքել, կա նաև հեռախոսային խոսակցություն, որը ձայնագրառվել է և ներկայացվել է խորհրդին:

2015թ. հուլիս ամսից սկսած իր հետ Մելիհդա Գրիգորյանը սկսել է խոսել կոպիտ տոնով, հոխորտալով:

Պատասխանողը ստանձնած գործերից յուրաքանչյուրով իր կողմից կատարված աշխատանքի կապակցությամբ խորհրդին տվել է բացատրություն այն մասին, որ.

1. Փլված բնակարանի համար հերթագրումը վերականգնելու մասով ոչինչ չի ձեռնարկել
2. Մարիամ Գրիգորյանին պատկանող տնակից վարձակալներին վտարելու համար հունիսի 1-ին դիմում է ներկայացրել ոստիկանություն, մասնակցել է տեսուչի աշխատանքներին, հաջորդ օրը ներկայացրել են հաղորդում, մասնակցել է հետաքննությանը իրականացնելով ներկայացուցչություն, տվել են բացատրություններ, այդ թվում գիշերային ժամերին, հարուցվել է քրեական գործ, հանդես է եկել, որպես տուժողի ներկայացուցիչ: Բացի այդ եղել է 1990թ. դատարանի վճիռ, որը ձեռագիր է եղել, լավ չի երևացել, դիմել է դեպարտամենտ կցելով լիազորագիրը, մակագրվել է դատավոր Լիլիթ Խաչատրյանին: Կատարողական վարույթների ընթացքում ներկայացրել է Մարիամ Գրիգորյանի շահերը կատարել բազմածավալ աշխատանք:
3. Մարիամ Գրիգորյանին հաշվառելու հետ կապված հարցերով պետք է զբաղվեր, երբ տնակից վարձակալների վտարման հարցը կլուծվեր:
4. Բանկում ներդրված գումարի հետ ստացման գործի հետ կապված մեծ գործ չի արվել, մի հատ դիմում է ներկայացվել մերժում է ստացվել, կոնկրետ այլ գործ չի արված:
5. 140000 դրամի հետ կապված կատարել է հարցում, պարզվել է, որ անձը, որից պետք է պահանջ ներկայացվեր մահացել էր, այդ իսկ պատճառով ոչինչ չի արվել
6. Մելիհդա Գրիգորյանին հաշվառելու հետ կապված ոչինչ չի կատարել:

Հեռախոսազանգերին չպատասխանելու հետ կապված պատասխանողը բացատրություն է տվել այն մասին, որ եղել են դեպքեր, որ իր հեռախոսը անջատված է

եղել, չի պատասխանել զանգերին, սակայն հետագայում նա խոսել է դիմողի հետ, ինքը դիմողներին բացահայտել է նաև իր տան հասցեն և հեռախոսը անջատված լինելու պայմաններում դիմողները կարող էին գալ իր տուն: Իր հեռախոսահամարներն են 093394567, 094394567, 099358822:

Մելիդա Գրիգորյանին վիրավորելու հետ կապված բացատրություն է տվել այն մասին, որ ինքը չի վիրավորել, բանսարկու, լկտի, հիմար արտահայտություններ չի արել, եթե ձայնագրության մեջ կան ինչ-որ արտահայտություններ, ապա ձայնագրությունը ինքն է ներկայացրել, եթե կան որոշակի արտահայտություններ, ապա դրանք վիրավորելու նպատակով չի արվել, այլ եղել է գնահատողական դատողություն:

Ինչ վերաբերվում է այն հարցին, որ գործերը դանդաղ են ընթացել, ապա ինքը զբաղված է եղել ինչպես դիմողների, այնպես էլ իր մյուս վստահորդների այլ գործերով և չի հասցրել:

Փաստաթղթերը դիմողներին չի հանձնել, որպեսզի հետագայում կարողանա ապացուցել, որ ինքը աշխատանք է կատարել:

4. Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան Սամվել Միրզոյանին: Վերջինս եկել է այն եզրակացության, որ. «Կարգապահական վարույթը նախապատրաստելիս պարզվեց, որ ըստ փաստերի փաստաբանը հարաբերվել է դիմումատուների հետ ըստ 13.09.2014թ. կնքված Հանձնարարություն պայմանագիր իրավաբանական օգնություն ցույց տալու մասին 1.1.2 կետով նախատեսված հանձնարարությունների մասով, որի համար բանավոր խորհրդակցել է Մելիդա Գրիգորյանի հետ, իսկ Մարիամ Գրիգորյանի հետ կնքվել է նշված պայմանագիրը: Պայմանագրի շրջանակներում է գործել փաստաբանը, կատարել է որոշակի նպատակային գործողություններ, մասնավորապես, գրավոր դիմել է դատարան կատարողական թերթ տրամադրելու պահանջով, որը դատարանի 19.01.2015թ. որոշմամբ բավարարվել է իսկ 02.02.2015թ. տրվել է կատարողական թերթ: 26.02.2015թ. ԴԱՀԿ մարմնի կողմից հարուցվել է կատարողական վարույթ իսկ 25.03.2015թ. ԴԱՀԿ մարմնի որոշմամբ կատարողական թերթի պահանջը կատարվել է: Ընդ որում՝ ըստ կատարողական վարույթը ավարտելու մասին հարկադիր կատարողի որոշման Մարիամ Գրիգորյանը որդու Լեռնիկ Գրիգորյանի հետ բնակեցվել է Մկրտիչ Գրիգորյանին հատկացված թիվ 25ա ժամանակավոր տնակում համատեղ բնակվելու մինչև Շահինյան փողոցի 2-րդ շենքի թիվ 46 վթարային տան դիմաց Մարիամ Գրիգորյանին համապատասխան բնակարան հատկացնելը ըստ 26.02.2015թ. հարուցված թիվ 08-3027/15 կատարողական վարույթի:

Պարզվել է, որ դիմումատուն՝ Մելիդա Գրիգորյանը սկզբնապես պայմանավորվածություն է ձեռք բերել, իսկ Մարիամ Գրիգորյանը պայմանագիրը կնքել է փաստաբանի հետ միայն Մարիամ Գրիգորյանի գործերով: Մելիդա

Գրիգորյանի կողմից փաստաբանին առաջարկված գործերի մասով պայմանագիր կնքված չի եղել չնայած այդ պահանջը պայմանագիր կնքելու և վճարներ կատարելու մասին ըստ հեռախոսային խոսակցությունների ձայնագրված վերծանման մշտապես պնդել է փաստաբանը: Ըստ հեռախոսային ձայնագրության վերծանման փաստաբանը պահանջել է ըստ նախնական պայմանավորվածության համապատասխան չափով պակասող վճարի լրիվ կատարում, որի պայմաններում չի հրաժարվել կատարելու հանձնարարությունը:

Նման պայմաններում պարզվում է, որ դիմումատուի պահանջները փաստաբանի կողմից հետաձգվել են, չեն կատարվել միմիայն նշված պատճառաբանությամբ: Ուստի Կանոնագրքի 3.1.3 կանոնի խախտում փաստաբանի կողմից գտնում եմ առկա չէ:

Վճարների մասով

Մելիհդա Գրիգորյանի կողմից ներկայացվող վճարները փաստաբանին որևէ վերաբերելի ու օրինական ապացույցով առկա չէ: Բանավոր հայտարարություններ են: Փաստաբանը ընդունում է 780 ԱՄՆ դոլարի ստացման փաստը, սակայն ոչ 1000 ԱՄՆ դոլարի, որի մասին ունեցել են պայմանավորվածություն, սակայն չի ստացել: Մելիհդա Գրիգորյանի կողմից այլ վճարների մասին 10.000 ռուբլի գումարած ևս 10.000 ռուբլի, միջանկյալ վճարներ և այլն ևս հաստատված չեն բացի 15.000 ռուբլի գումարը ռուբլին, որի մասի առկա է գրավոր ակտ: Ուստի Կանոնագրքի 3.8.5 կանոնի խախտում փաստաբանի կողմից գտնում եմ առկա չէ:

Ըստ դիմումատուների կողմից ներկայացված փաստաթղթերի առկա է ՀՀ ոստ. Շիրակի մարզի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Կիրակոսյանի որոշումը, որտեղ պարզվել է, որ Արտյոմ Տոնոյանը 2010թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին 207/352 հասցեի տնակը 2000 ԱՄՆ դոլարով գնել է Մարիամ Գրիգորյանի եղբոր կին՝ Գյուլնարա Գրիգորյանից: Ներկայումս դեռ տվյալ քրեական գործի վարույթը շարունակվում է և տվյալ հանցագործությամբ տուժող է Տոնոյանը: Տվյալ որոշմամբ մերժվել է Մարիամ Գրիգորյանի միջնորդությունը իրեն ևս տուժված ճանաչելու և քրեական գործով մեղադրանքը լրացնելու մասին: Ըստ ներկայացված գրավոր նյութերի առկա են բազմաթիվ ու բազմաբնույթ իրավական ակտեր որոնք վկայում են ավելի շուտ փաստաբանի բարեխղճության, քան թե նրա անբարեխղճության մասին: Այլ է փաստաբանի կողմից կատարվող հանձնարարականների, ժամանակին, լիիրավ ու ամբողջական կատարման եղանակի ընտրությանը, ու արդյունավետությանը հարցերի բացթողումները: Այս առումով չհամաձայնվել դիմումատուների հետ չի կարելի դժգոհությունները տեղին են: Չնայած հարկ է մատնանշել ու հղում կատարել փաստաբանի կողմից 13.09.2014թ. կնքված փաստաբանական օգնություն ցուցաբերելու մասին պայմանագրի 2.4 կետի 2.4.1.,2.4.2,2.4.3,2.4.4 ենթակետերի պահանջներին այնքանով, որ փաստաբանի գործողությունները սուբյեկտիվ են ու անկախ: Առավել ևս, որ ըստ առկա դատական համակարգի գործելակերպի չի կարելի անտեսել (դատարանների ծանրաբեռնվածություն, դատավարական ժամկետների անկանխատեսելի

հետաձգումներ և այլն), որոնք կախյալ չեն փաստաբանի գործելակերպից, ուստի դիմումատուների բողոքը գործի արդյունքների հետաձգումների մասով չի կարող միակողմանի ու միանշանակ վերագրվել փաստաբանի գործելակերպին: Ամբողջ ներկայացված նյութերում չկա բողոքների կամ դիմումների կամ բացատրությունների մեջ որևէ նշում փաստաբան Ասլանյանի կողմից անհարգելի բացակայությունների, դատական նիստերին չներկայանալու, դատավարական գործողություններից խուսափելու որևէ հանգամանքի մասին: Ուստի Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 կանոնի խախտում փաստաբանի կողմից գտնում եմ առկա չէ:

Հեռախոսազանգերին պատասխանելուց խուսափելու և գործի վերաբերյալ տեղեկություններ չհայտնելու մասով:

Տարօրինակ է, սակայն փաստ, որ փաստաբան Ասլանյանը իր վստահորդներին տվել է իր բոլոր հնարավոր և տվյալ ժամանակահատվածում հասանելի ու գրանցված հեռախոսահամարները: Տվյալ փաստը ներկայացված է հենց դիմումատուների կողմից: Բացի այդ դիմումատուներին հայտնի են եղել փաստաբան Ասլանյանի բնակության հասցեները, որտեղ նրանք փաստացի եղել են ու հավաստիացել փաստաբանի իրական բնակության վայրի մասին: Ասլանյանը, ըստ դիմումատուների կողմից ներկայացված գրավոր և ձայնագրային ապացույցների հրավիրել է նրանց բանակցությունների իրենց հարաբերություններում հստակեցումներ կատարելու համար ու թե ինչու չի կատարվել մնացել է անպատասխան: Դիմումատուների կողմից ներկայացված «ՎԻՎԱ սել» ՓԲԸ կողմից տրված ելքային վերծանումների ցանկով ևս հաստատվում են, որ կողմերի միջև մշտապես եղել են հեռախոսային կապ ու խոսակցություններ 12 SMS, 30 հեռախոսազանգ: Ընդ որում զանգերը եղել են տևական 2-ից մինչև 20 րոպե տևողությամբ: Ներկայացված ապացույցներով կարելի է եզրակացնել, որ փաստաբանը գտնվել է ոչ պայմանագրային հարաբերություններով նախատեսված Մելիհդա Գրիգորյանի մշտական անուղղակի հսկողության ներքո, որի պայմաններում նրան պարտադրվել է կատարելու թե իր պայմանագրային պարտավորություններից բխող ու թե նախատեսվող պայմանագրի պահանջներից պարտավորություններ, որոնք բացառված չէ մի կողմից չեն կատարվել այնքանով, որ պարտավորված չի եղել կատարելու պայմանագիրը չկնքված լինելու պատճառով, մյուս կողմից էլ այլ գործերով զբաղվածության պատճառով իր աշխատանքային օրվա ռեժիմից դուրս է թողնված եղել, որով է, բնական է առաջացրել է իր վստահորդ Մարիամ Գրիգորյանի և հնարավոր վստահորդ՝ Մելիհդա Գրիգորյանի դժգոհությունը ու անվստահությունը: Նման պայմաններում է, որ Մարիամ և Մելիհդա Գրիգորյանների ամենօրյա պահանջները, չկատարման դեպքում անկախ պատճառաբանությունից դժգոհությունը, փաստաբանի մոտ առաջացրել է պոռթկում ու չի կարողացել տիրապետել իր հուզմունքներին ու տեղիք է տվել վստահորդին ու նրա մորը, ամբողջ շրջապատողներին վիրավորելը: Նման փաստը հիմնավոր է ու առկա է: Ուստի Կանոնագրքի 3.6.1 կետի կանոնի խախտում փաստաբանի կողմից գտնում եմ առկա չէ իսկ 2.2.2,2.2.3 կետերի խախտումը առկա է ու բացահայտ»:

5. Կողմերի դիրքորոշումը կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ

Ներկայացված եզրակացության կապակցության կողմերից Մելիդա Գրիգորյանը ներկայացրել է առարկություն:

6. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ

Պալատի Խորհուրդն ուսումնասիրել է հետևյալ ապացույցները.

Մասնավորապես դիմողների կողմից ներկայացվել են՝

1. 2003թ. հասարակ գրավոր կնքված և Լենինականի Կոոպերատիվ «ԱՆԱՀԻՏ-1» անկյունակնիքով դրոշմված տնակի վարձակալության պայմանագիրը Մելիդա Գրիգորյանի և Արտյոմ Անտոնյանի միջև (պատճենը),
2. 16.10.2015թ. փոստային ետ ծանուցման անդորրագիրը, որը ստացվել է Էդ.Ասլանյանի կողմից 22.10.2015թ. Վշտունի փողոցի 3շենքի 9 բն. հասցեով (պատճենը),
3. ՀՀ ոստ. Շիրակի մարզի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Կիրակոսյանի կողմից Մարիամ Գրիգորյանի միջնորդությունը հարուցված թիվ 18155415 քրեական գործով քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրյալ Գյուլնարա Գրիգորյանի կողմից կատարված հանցագործությամբ իրեն նյութական վնաս պատճառելու մասով մեղադրանքը լրացնելու մասին մերժելու որոշման (պատճենը),
4. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ Շիրակի մարզի բաժնի պետի տեղակալ Թ.Վարդանյանի 25.03.2015թ. որոշում կատարողական վարույթը ավարտելու մասին և կատարողական թերթը (պատճենները),
5. Լենինականի Շիրակի շրջանի ժող. դատարանի 1990թ. սեպտեմբերի 27-ի թիվ 2/489/90 քաղ. գործով կատ. թերթի պատճենը,
6. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 24.07.2015թ. «Վճռի կատարման ճիշտ կարգն ու եղանակն ապահովող կատ.թերթ տրամադրելու մասին դիմումը քննության առնելու մասին որոշումն» (պատճենը),
7. «ՎԻՎԱ սել» ՓԲԸ կողմից տրամադրված 2015թ. հուլիսի 4-ից առ 2015թ. օգոստոսի 4-ը 093 780389 հեռախոսահամարից կատարված ելքային հեռախոսազանգերի վերծանումները 6 թերթից, որտեղ վերջին թերթի հետևին առկա են փաստաբան Էդ.Ասլանյանի կողմից օգտագործված ու օգտագործվող հեռախոսահամարները այնպես էլ ներկայացված ժամանակաշրջանում փաստաբանին ուղղված հեռախոսազանգերի ու հեռախոսանամակների հաշված ամփոփ քանակները,
8. Համակարգչային սկավառակ հեռախոսային նամակների (SMS) և հեռախոսային խոսակցության ձայնագրման նյութով (1 սկավառակ) և գրավոր վերծանումները,
9. 16.07.2015թ. Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 02/5612/15 գրության պատճենը,

10. «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ «Շիրակի» մասնաճյուղի կողմից տրված 26.05.2015թ. փոխանցման անդորրագրերի պատճենները,

11. Փաստաբան Էդ. Ասլանյանի կողմից Մարիամ Գրիգորյանից ստացած փաստաթղթերի բնօրինակները ստացման մասին ստացականի պատճենը,

12. 13.09.2014թ. ԱԿՏ տրված փաստաբան Էդ.Ասլանյանի կողմից Մարիամ Գրիգորյանին 159.000 ՀՀ դրամին համարժեք 15.000 ՌԴ ռուբլի ստանալու մասին,

13. Հանձնարարություն պայմանագիր իրավաբանական օգնություն ցույց տալու մասին կնքված Փաստաբան Էդ.Ասլանյանի և Մարիամ Գրիգորյանի միջև 13.09.2014թ.,

14. Կատարողական թերթ տրամադրելու դիմումը քննության առնելու մասին 19.01.2015թ. որոշման պատճենը,

15. Փաստաբան Էդուարդ Ասլանյանի այցեքարտի պատճենը,

16. Փաստաբան Էդ.Ասլանյանին 11.10.2015թ. դիմումը ստացած փաստաթղթերը ետ վերադարձնելու մասին (պատճենը),

17. Գրավոր բացատրություններ գրված Մելիդա Գրիգորյանի, սակայն ստորագրված նաև Մարիամ Գրիգորյանի կողմից յուրաքանչյուր հանգամանքի վերաբերյալ,

18. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.01.2016թ. որոշումը Է. Ասլանյանի հայցադիմումն ընդդեմ Մելիդա և Մարիամ Գրիգորյանների պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի մասին վարույթ ընդունելու մասին կից հուշաթերթիկով,

19. Մելիդա Գրիգորյանի անձնագրի պատճենը,

20. ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը,

21. Գյումրի-1 սոցիալական աջակցության տարածքային բաժնի պետի թիվ Ե-490 գրությունը,

22. Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Կիրակոսյանի 28.06.15 թ. գրությունը և միջնորդությունը մերժելու մասին որոշումը Շիրակի մարզի դատախազի 11.08.15թ. գրությունը և 10.08.15թ. միջնորդությունը մերժելու մասին որոշումը,

23. Դիմում վճռի կատարումն ապահովող պատշաճ փաստաթուղթ կատարման ճիշտ կարգն ու եղանակն ապահովող կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ,

24. 11.06.2015թ. որոշում քր. Գործ հարուցելու և այն ըստ ենթակայության ուղարկելու մասին,

25. ԴԱՀԿ շիրակի մարզային բաժնի պետի 08.06.15թ. գրությունը,

26. 005142 կտրոն ծանուցագիրը,

27. դիմում կատարողական թերթը կրկին կատարման ներկայացնելու վերաբերյալ,

28. Դիմում 27.09.1990թ. կայացված վճիռը տրված կատարողական թեթով կատարման ներկայացնելու վերաբերյալ,

29. Արձանագրություն բացատրություն վերցնելու մասին,

30. Տեղեկատվություն ստանալու հարցումներ,

31. Գյումրու քաղաքի Մուշի բաժնի պետի 26.01.2015թ. գրությունը,

32. 28.01.15թ. դիմում կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ,

33. 14.01.15թ. դիմում կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ,
34. 31.10.15թ. Ե-32518/14 գրությունը,
35. Հայցադիմում պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի մասին:

7. Պատասխանողին բնութագրող հանգամանքները

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար Գևորգ Գևորգյանի՝ 18.01.2016թ-ի N ԸԴՂ/ ԿԳ 19-16 տեղեկանքի համաձայն՝ գործով Պատասխանող, փաստաբան Էդուարդ Ասլանյանի (արտոնագիր թիվ 499, ստացված 20.10.2006թ-ին) նկատմամբ 2006-2016թթ. ընկած ժամանակահատվածում 2 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ.

1. 25.02.2010թ-ին փաստաբան Էդուարդ Ասլանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճվել է՝ արտոնություն կիրառվելու հիմքով:
2. 19.05.2011թ-ին հարուցված կարգապահական վարույթով փաստաբան Էդուարդ Ասլանյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով: Տույժը մարվել է:

8. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Գնահատելով գործում առկա ապացույցները, Խորհուրդը գտնում է, որ Փաստաբան Էդուարդ Ասլանյանի նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3., 3.6.1., 2.2.2., 2.2.3. կետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով, իսկ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2., 3.1.8., 3.5.5., 3.8.5. կետերի պահանջների խախտման համար փաստաբան Էդուարդ Ասլանյանին պետք է ճանաչել մեղավոր, ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

8.1 Կարգապահական վարույթը կարճելու հիմնավորումներ

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2. կետի համաձայն. «Փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն)»:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3 կետի համաձայն. «Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը»: Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբանի գործողություններում առկա չեն Փաստաբանի

վարքագծի կանոնագրքի 2.2.2, 2.2.3 կետերի խախտման հատկանիշներ, ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

Դիմողները դիմելով ՀՀ Փաստաբանների պալատ հայտնել են, որ Է.Ասլանյանը վիրավորել է Մելիդա Գրիգորյանին, անվանելով նրան բանսարկու, լկտի: Հետագայում գործի նախապատրաստման ընթացքում և ՀՀ փաստաբանների պալատին բացատրություն տալու ընթացքում դիմող Մելիդա Գրիգորյանը հայտնել է, որ պատասխանողը օգոստոս ամսին զանգահարել է աղջկանը և իրեն անպատվել է ասելով. «տգետ ես դու, հիմար, ինչ ուզում ես գլխիցդ դուրս տուր»: Այդ խոսակցությունը իրենք ձայնագրել են և ներկայացրել խորհրդին: Բացի դա պատասխանողը իրեն տգետ է անվանել նաև հեռախոսով կարճ հաղորդագրություն ուղարկելով: Այդ հաղորդագրությունը ինքը ևս ուղարկել է փաստաբանների պալատ: Բացի այդ ինքը վիրավորվել է, քանի որ փաստաբանը հաղորդագրություն է ուղարկել ասելով. «չափդ ճանաչի տիկին»: Պալատի խորհուրդը հարկ է համարում նշել, որ պատասխանողի նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2, 2.2.3 կետերի հատկանիշներով վարույթը հարուցվել է ստուգելու համար, թե արդյոք պատասխանողը դիմող Մելիդա Գրիգորյանին անվանել է բանսարկու, լկտի, թե ոչ: Ուստի Պալատի խորհուրդը նշված կետերի հատկանիշների խախտման հարցը քննարկելիս չի անդրադառնում այն հարցին, թե արդյոք պատասխանողը անպատվել է ասելով. «տգետ ես դու, հիմար, ինչ ուզում ես գլխիցդ դուրս տուր», կարճ հաղորդագրություն ուղարկել է արդյոք դիմողին անվանելով տգետ, չափդ ճանաչի տիկին: Պալատի խորհուրդը չի անդրադառնում նաև այն հարցին, թե դրանք վիրավորական արտահայտություններ են, թե ոչ և փաստաբանը իրավունք ուներ նման արտահայտություններ կատարելու, թե ոչ, քանի որ դա դուրս է հարուցված վարույթի շրջանակներից: Պալատի խորհուրդը անդրադարձել է միայն այն հարցին, թե պատասխանողը դիմողին անվանել է արդյոք բանսարկու և լկտի: Կարգապահական վարույթի ընթացքում դիմողները չեն ներկայացրել ոչ մի ապացույց, որով կհիմնավորեին, որ պատասխանողը թույլ է տվել նման արտահայտություններ: Նման պայմաններում Պալատի խորհուրդը չի անդրադարձել այն հարցին, թե նման արտահայտություններ թույլ տալու պայմաններում պատասխանողի գործողություններում առկա կլինեին արդյոք Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2., 2.2.3. կետերի պահանջների խախտման հատկանիշներ: Ուստի Պալատի խորհուրդը գտնում է, որ Փաստաբան Էդուարդ Ասլանյանի նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2., 2.2.3. կետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3 կետի համաձայն. «Գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք

է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա»:

Ինչպես դիմողը, այնպես էլ պատասխանողը ընդունել են, որ իրենց միջև բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ պատասխանողը կզբաղվի նաև Մելիդա Գրիգորյանի գործով և պատասխանողին մայիս ամսվա վերջին տրվել է որոշակի գումար նշված հանձնարարության կատարման համար: Պատասխանողը նշել է, որ գրավոր պայմանագիրը պետք է կնքվեր ավելի ուշ, երբ Մելիդա Գրիգորյանը կստանար անձնագիր: Մելիդա Գրիգորյանը հաստատել է, որ գումար տալու ժամանակ ինքը անձնագիր չի ունեցել, այն ստացել է օրեր անց: Կարգապահական վարույթի ընթացքում ձեռք են բերվել ապացույցներ այն մասին, որ պատասխանողը հետագայում բազմիցս պահանջել է, որպեսզի դիմողը իր հետ կնքի պայմանագիր, մինչդեռ վերջինս հրաժարվել է այն կնքել, քանի որ չի ցանկացել, որպեսզի պատասխանողը շարունակի զբաղվել իր գործով: Նման պայմաններում պատասխանողը զրկված է եղել պայմանագիր կնքելու հնարավորությունից և դիմել է դատարան պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջով: Ուստի Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով պատասխանողի գործողություններում առկա չեն Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3 կետի խախտման հատկանիշներ:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.6.1 կետի համաձայն. «Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին»: Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբանի գործողություններում առկա չեն Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.6.1 կետի խախտման հատկանիշներ, ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

Նշված կետի խախտման հատկանիշներով հարուցվել է վարույթ ստուգելու համար դիմողների այն հայտարարությունը, որ պատասխանողը իրենց հեռախոսազանգերին և կարճ հաղորդագրություններին չի պատասխանել:

Պատասխանողը հայտնել է, որ իր հեռախոսահամարներն են 093394567, 094394567, 099358822: Բացի այդ դիմողը տրամադրել է Էդուարդ Ասլանյանի այցեքարտը, որում որպես վերջինիս հեռախոսահամարներ նշված են 010358822, 093394567, 099358822: Գործի նախապատրաստման ընթացքում ինքը դիմող Մելիդա Գրիգորյանը ներկայացրել է իր հեռախոսահամարի վերծանումները, որոնցով հիմնավորվել է, որ իր 093780389 հեռախոսահամարից գրանցվել է զանգ պատասխանողի 094394567 հեռախոսահամարին և նրանց միջև գրանցվել է խոսակցություն հետևյալ տևողությամբ՝

- 06.07.15թ.-ին ժամը 11.21.32-ին 23 վայրկյան,
- 06.07.15թ.-ին ժամը 14.47.30-ին 36 վայրկյան,
- 09.07.15թ.-ին ժամը 14.10.01-ին 1րոպե 21 վայրկյան,
- 09.07.15թ.-ին ժամը 14.23.02-ին 18 վայրկյան,

- 09.07.15թ.-ին ժամը 15.47.42-ին վայրկյան,
- 10.07.15թ.-ին ժամը 11.34.30-ին 43 վայրկյան,
- 14.07.15թ.-ին ժամը 11.07.00-ին 2րոպե 17 վայրկյան,
- 15.07.15թ.-ին ժամը 16.29.06-ին 12 վայրկյան,
- 27.07.15թ.-ին ժամը 19.02.45-ին 16 վայրկյան:

Ավելին՝ հեռախոսային խոսակցություններ են գրանցվել նաև 010358822 հեռախոսահամարին 03.08.15թ. 37 և 52 վայրկյան տևողությամբ:

Ուստի չի հիմնավորվել դիմողների այն պնդումը, որ իրենք չեն կարողացել կապ հաստատել պատասխանողի հետ:

8.2 Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմնավորումներ

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի՝

- 2.7.2 կետի համաձայն. «Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում»:
- 3.1.8 կետի համաձայն. «Փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը»:
- 3.5.5 կետի համաձայն. «Փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից»:
- 3.8.5. կետի համաձայն. «Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝

1) վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

2) վերադարձնել հանձնարարության կատարման հետ կապված ծախսերի հատուցման համար նախատեսված և չծախսված միջոցները,

3) վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել)»:

Պալատի խորհուրդը գտնում է, որ պատասխանողի գործողություններում առկա են Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.8.5 կետերի խախտման հատկանիշներ, ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

Դիմող Մելիհդա Գրիգորյանն ու Պատասխանողն ընդունել են, որ 2015թ. Սկզբներին պատասխանողը ստացել է հանձնարարություն զբաղվելու Մելիհդա

Գրիգորյանի գործերով, մասնավորապես, դեռևս խորհրդային տարիներից բանկում ներդրված 9500 ռուբլու վերադարձի և հարևանից դատարանի վճռով 140000 դրամի բռնագանձման գործերով:

Պատասխանողը նշել է, որ դիմողի հաշվառման վերաբերյալ գործով էլ պետք է զբաղվեր, սակայն, դիմողը նման փաստ չի ընդունել:

Կողմերն ընդունել են, որ նշված գործերի համար ծառայության արժեքի շուրջ համաձայնություն են ձեռք բերել 1000 ԱՄՆ դոլարի չափով:

Ըստ դիմողի բացատրության, նշված երկու գործերի համար ինքը չի առարկել պատասխանողի պահանջած 1000 ԱՄՆ դոլարը վճարել, քանի որ փաստաբանը խոստացել է 9500 ռուբլու դիմաց ստանալ 165000 ԱՄՆ դոլար: Դիմողը նշել է նաև, որ 1000 ԱՄՆ դոլարը վճարվել է հետևյալ չափաբաժիններով՝ 20.000 (մեկ այլ տեղ նշվում է 30.000) ՌԴ ռուբլի և 780 ԱՄՆ դոլար:

Դիմողը պնդում է, որ Պատասխանողին վճարել է ամբողջ գումարը՝ 780 ԱՄՆ դոլար և 20.000 (մեկ այլ տեղ նշվում է 30.000) ռուբլի, իսկ Պատասխանողը պնդում է, որ ստացել է ընդամենը 780 ԱՄՆ դոլար, իսկ մնացած գումարը չի ստացել:

Այսպիսով անվիճելի փաստ է Դիմողի կողմից Պատասխանողին 780 ԱՄՆ դոլար վճարելու փաստը:

Ըստ ՀՀ ԿԸՀ www.elections.am կայքի ընտրողների ռեգիստերի տվյալների, Մելիհդա Գրիգորյանը, հաշվառված ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հակոբյան փող. 50 հասցեում, ծնվել է 11.11.1049թ-ին:

01.01.2015թ-ին ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ մասերի համաձայն. «*11) 2015 թվականին շարունակվում է «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծրամադրումը՝ «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ կետով հաստատված ծրագրի շրջանակներում հաշվառված անձանց մասով՝ այդ ծրագրին համապատասխան (հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջը).*

12) 2015 թվականին շարունակվում է սույն օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման N 10 բաժնի N 07 խմբի N 01 դասի «06. «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց՝

ա. փոխհատուցման արտահերթ ծրամադրումը Հայրենական մեծ պատերազմի

վետերաններին՝ «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 8 հավելվածի 4-րդ կետով սահմանված սանդղակին համապատասխան՝ կառավարության սահմանած կարգով,

բ. փոխհատուցման տրամադրումը «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 8 հավելվածի 4-րդ կետով սահմանված սանդղակին համապատասխան՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված «0»-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների՝ ***մինչև 1931 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված անդամներին*** *(այսուհետ՝ սոցիալապես անապահով անձ) և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակից և մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված անձանց, ինչպես նաև կառավարության սահմանած այլ սոցիալական խմբերին՝ կառավարության սահմանած կարգով»:*

«ՀՀ 2006թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածով հաստատված ծրագրի 4-րդ մասով սահմանվել է ավանդի դիմաց փոխհատուցման չափի որոշման սանդղակը, փոխհատուցման հումարի հետևյալ չափով.

Ավանդի գումարի չափը (խորհրդային ռուբլով)	**Տրամադրվող փոխհատուցման գումարը (ՀՀ դրամով)**
1000-ից ոչ ավելի	Ավանդի գումարը x 84
1001-ից մինչև 3000 (ներառյալ)	84000+(ավանդի 1000 խորհրդային ռուբլին գերազանցող գումարը x 29.4)
3001-ից մինչև 5000 (ներառյալ)	142800+(ավանդի 3000 խորհրդային ռուբլին գերազանցող գումարը x 16.8)
5001-ից մինչև 10000 (ներառյալ)	176400+(ավանդի 5000 խորհրդային ռուբլին գերազանցող գումարը x 8)
10000-ից ավելի	216400+(ավանդի 10000 խորհրդային ռուբլին գերազանցող գումարը x 4)

Այսպիսով, դիմողը ծնվել է 11.11.1949թ-ին, այն դեպքում, երբ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում մինչև 1993թ-ն ավանդատու հանդիսացող այն քաղաքացիները կարող են ստանալ իրենց ավանդները, որոնք ծնվել են մինչև

31.12.1931թ.: Բացի այդ, Դիմողի 9500 ռուբլի ավանդի դեպքում փոխհատուցման գումարը կկազմեր ընդամենը 212.400 դրամ:

Պատասխանողը ստանձնած գործերից յուրաքանչյուրով իր կողմից կատարված աշխատանքի կապակցությամբ խորհրդին տվել է բացատրություն այն մասին, որ.

1. Փլված բնակարանի համար հերթագրումը վերականգնելու մասով ոչինչ չի ձեռնարկել:
2. Մարիամ Գրիգորյանին պատկանող տնակից վարձակալներին վտարելու համար հունիսի 1-ին դիմում է ներկայացրել ոստիկանություն, մասնակցել է տեսուչի աշխատանքներին, հաջորդ օրը ներկայացրել են հաղորդում, մասնակցել է հետաքննությանը իրականացնելով ներկայացուցչություն, տվել են բացատրություններ, այդ թվում գիշերային ժամերին, հարուցվել է քրեական գործ, հանդես է եկել, որպես տուժողի ներկայացուցիչ: Բացի այդ եղել է 1990թ. դատարանի վճիռ, որը ձեռագիր է եղել, լավ չի երևացել, դիմել է դեպարտամենտ կցելով լիազորագիրը, մակագրվել է դատավոր Լիլիթ Խաչատրյանին: Կատարողական վարույթների ընթացքում ներկայացրել է Մարիամ Գրիգորյանի շահերը կատարել բազմածավալ աշխատանք:

Այս կապակցությամբ Խորհուրդը գտնում է, որ թեև Պատասխանողը Դիմողի շահերը ներկայացրել է հափշտակության հետ կապված գործով, սակայն դա չի կարող համարվել վարձակալներին վտարելու հետ կապված հանձնարարության կատարմանն ուղղված գործողությունների կատարում:

3. Մարիամ Գրիգորյանին հաշվառելու հետ կապված հարցերով պետք է զբաղվեր, երբ տնակից վարձակալների վտարման հարցը կլուծվեր:
4. Բանկում ներդրված գումարի հետ ստացման գործի հետ կապված մեծ գործ չի արվել, մի հատ դիմում է ներկայացվել մերժում է ստացվել, կոնկրետ այլ գործ չի արված:
5. 140000 դրամի հետ կապված կատարել է հարցում, պարզվել է, որ անձը, որից պետք է պահանջ ներկայացվեր մահացել էր, այդ իսկ պատճառով ոչինչ չի արվել
6. Մելիհդա Գրիգորյանին հաշվառելու հետ կապված ոչինչ չի կատարել:
7. Բացի այդ, Պատասխանողը բացատրություն տալուց ընդունել է, որ ինքը չէր հասցնում զբաղվել ինչպես դիմողների բազմաթիվ գործերով, այնպես էլ իր այլ վստահորդների գործերով: Դա է եղել պատճառը, որ ինքը դիմողների հանձնարարություն ամբողջ ծավալով չի կատարել:

Պալատի խորհուրդը գտնում է, որ 1949թ-ին ծնված Դիմողի կողմից բանկում ներդրված 9500 խորհրդային ռուբլու ավանդի համար փոխհատուցում ստանալու հետ կապված ծառայություն մատուցելու պարտավորություն ստանձնելով, այդ կապակցությամբ 1 դիմում գրելով և մերժում ստանալուց հետո ոչինչ չանելով, դա ծանրաբեռնվածությամբ բացատրելով, վերը նշված 1-ից 7-րդ կետերում նշված փաստերն ընդունելով, ինչպես նաև փաստաբանական ծառայության համար վճարված գումարը, դրա մասը այլևայլ պատճառաբանություններով չվերադարձնելով, պատասխանողը թույլ է տվել Փաստաբանի վարքագծի

կանոնագրքի վերը նշված կանոնների խախտում, քանի որ ակնհայտ է, որ պատասխանողըտվյալ ոլորտը կանոնակարգող իրավունքին չի տիրապետել, պատշաճ ծառայություն չի մատուցել, անհրաժեշտ գործողություններ չի ձեռնարկել, և խուսափել է վճարված գումարի կամ դրա մի մասի վերադարձնելուց:

Կարգապահական տույժ ընտրելուց Պալատի խորհուրդը հաշվի է առնում, որ Է. Ասլանյանը չունի նախկին տույժեր, պատասխանողներին ցույց է տվել պայմանագրով և պայմանավորվածությունից դուրս ծառայություններ, այդ թվում քրեական վարույթի շրջանակներում, ուստի գտնում է, որ նրա նկատմամբ պետք է կիրառվի ամենամեղմ կարգապահական տույժը՝ նկատողություն:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 39-րդ, 39.6-ից 39.9-րդ հոդվածների, Պալատի կանոնադրության 16.26 կետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Էդուարդ Ասլանյանի (արտոնագիր թիվ 499) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3., 3.6.1., 2.2.2., 2.2.3. կետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:***
2. ***Փաստաբան Էդուարդ Ասլանյանին Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2., 3.1.8., 3.5.5., 3.8.5. կետերի պահանջների խախտման համար ճանաչել մեղավոր:***
3. ***Փաստաբան Էդուարդ Ասլանյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:***
4. ***Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Լուսինե Սահակյան